ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"21" 02 2013թ

№ 15 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013թ. հունվարի 17-ի «2012-2013 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման մասին» N 35-Ա/Ք հրամանի՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. 2013 թ. փետրվարի 23-ից մինչև մարտի 14-ը ներառյալ կազմակերպել դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլը և այն անցկացնել Կապանի <<Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

2. Հաստատել՝

1) 2012-2013 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլի կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) առարկայական օլիմպիադաների մարզային փուլի ժամանակացույցը և առարկայական հանձնաժողովների կազմը՝ համաձայն N 2 և N 3 հավելվածների:

3. Հանձնարարել կազմակերպական կոմիտեին՝ կազմել և ներկայացնել դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլի անցկացման համար ֆինանսական ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 4 հավելվածի:

4. Արդյունքներն ամփոփել մինչև 2013թ. մարտի 17-ը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ներկայացնել դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակիցների ցուցակը՝ համաձայն N 5 հավելվածի:

5. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. փետրվարի 21
ք. Կապան